Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության 2015 թվականի գործունեության վերաբերյալ

Հանրապետությունում գյուղատնտեսությունն ունենալով ռազմավարական նշանակություն՝ պարենային ապահովության հիմնախնդրի լուծման, գյուղական տարածքների զարգացման ու գյուղական բնակավայրերի ամրապնդման համար վճռորոշ դեր է խաղում երկրի անվտանգության, կենսագործունեության և տնտեսության կայունացման գործում:

Որպես երկրի տնտեսության առաջատար ճյուղի՝ գյուղատնտեսության նախարարության 2015 թվականի գործունեությունը նպատակաուղղված է եղել հողօգտագործման ու անասնապահության վարման կատարելագործման արդյունքում գյուղատնտեսական արտադրանքի ծավալների ավելացմանը, ոլորտի գերակա ուղղություններին համապատասխան՝ աշխատանքների կատարմանը, ընթացիկ հիմնախնդիրների լուծմանը:

2015 թվականին իրագործվել են նախանշված բոլոր ծրագրերը և միջոցառումները, որի համար պետական բյուջեից ոլորտին հատկացվել 3254561.7 հազ. դրամ:

Հաշվետու տարում շարունակվել են բուսաբուծության ճյուղի արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերը (սերմնաբուծության և սերմնարտադրության, սերմերի որակի ստուգման ու պետական սորտափորձարկման միջոցառումների, սև ցելի մշակության, բույսերի պաշտպանության և այլն):

Սերմնաբուծության և սերմնարտադրության զարգացման ծրագրի իրագործման արդյունքում, հաշվետու տարում, աշնանացան ցորենի առաջնային սերմնաբուծության նպատակով բերքի տակ ցանվել է 184.8 հեկտար ցորեն: Ընդհանուր առմամբ հավաքվել է 686.5 տոննա հավաստագրված աշնանացան հացահատիկի բերք, որից պատրաստվել է 309.0 տոննա աշնանացան սերմացու:

Հանրապետությունում ագրոքիմիական և բուսասանիտարական վիճակի ուսումնասիրման նպատակով շուրջ 72.7 հազար հեկտարի վրա կատարվել են ցանքսերի և տնկարկների հետազոտություններ: Իրականացվել է 160 նմուշ թունանյութի հետազոտություն, հողերի 875/4375 և հանքային պարարտանյութերի 10/22 նմուշ/անալիզներ:

2015թվականին շարունակվել են պետական աջակցության շրջանակներում սերմերի, պարարտանյութերի, թունանյութերի, դիզվառելիքի արժեքների մասնակի սուբսիդավորման և հողօգտագործողներին մատչելի պայմաններով տրամադրման աշխատանքները:

2016 թվականի բերքի տակ աշնանացանի իրականացման համար հողօգտագործողներին, որպես պետական աջակցություն, սուբսիդավորված գներով տրամադրվել է ավելի քան 867.0 տոննա դիզելային վառելիք:

2015 թվականին շարունակվել են նաև ԼՂՀ Հադրութի շրջանի Ուխտաձորի և Տողի ենթաշրջանների զարգացման, Մարտունու շրջանի մի շարք համայնքներում բազմամյա խոտաբույսերի մշակության ծրագրերը, որոնց շրջանակներում իրականացվել են ինչպես գյուղատնտեսական, այնպես էլ գյուղատնտեսական աշխատանքների արդյունավետությունը բարձրացնող ենթակառուցվածքների բարելավման միջոցառումներ: Մասնավորապես ձեռք է բերվել և անհատույց տրամադրվել է 7780 հատ տարբեր տեսակի տնկիներ, 4700 մետր խողովակ, բազմամյա կերային խոտաբույսերի մշակության համար տրամադրվել են անհրաժեշտ քանակությամբ սերմացու և դիզվառելիք:

Նոր վարելահողեր ջրարբի դարձնելու, բանջարաբոստանային կուլտուրաները և պտղատու այգիերի տարածքները ընդլայնելու նպատակով.

2015 թվականին ենթաշրջանային զարգացման ծրագրերով Հադրութի շրջանի Ծակուռի և Թաղուտ համայնքներում ավարտվել են նոր արտեզյան հորի և ինքնահոս ոռոգման ցանցի (արտեզյան ջրհորի փոխարեն) շինարարական աշխատանքները, Հակակու և Քյուրաթաղ համայնքներում համապատասխանաբար վերականգնվել են ջրամատակարարման համակարգը ու խորքային հորը :

Արտեզյան ջրհորների վերանորոգման ծրագրով Մարտունու շրջանի Ճարտար, Խնուշինակ, Գիշի, Սպիտակաշեն և Նոր շեն համայնքներում վերկանգնվել են հինգ և կառուցվել մեկ խորքային հոր, կարգավորող ջրավազան ու տեղադրվել երկու ջրաբաք: Հադրութի շրջանի Մեծ Թաղեր և Ազոխ համայնքներում վերանորոգվել են երկու արտեզյան ջրհորներ: Ասկերանի շրջանի Խրամորթ համայնքում հորատվել և վերականգնվել են մեկական հորեր, կառուցվել են ջրատարներ և տեղադրվել կարգավորող ջրաբաք:

2015թ. մեկնարկել է մեխանիկական եղանակով մատակարարվող ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի մասնակի սուբսիդավորման ծրագիրը, որի շրջանակում սուբսիդավորվել է ավելի քան 32.0 մլն դրամ գումար, արդյունքում ոռոգման տակ է դրվել 601.4 հեկտար ցանքատարածք:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կերարտադրության և անասնաբուծության զարգացման 2015-2017 թվականների ծրագրի շրջանակում տրամադրվել է հողօգտագործողներին 117647 կիլոգրամ կորնգանի բարձրորակ սերմ, որով ցանվել է 973.1 հեկտար տարածք:

Համաձայն օպերատիվ տվյալների, 2015 թվականին հանրապետությունում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների ընդհանուր մակերեսը կազմել է 52210.2 հեկտար, ընդ որում, աշնանացան մշակաբույսերի տարածքները

կազմում են 40654.2 հեկտար, իսկ գարնանացանինը՝ 11556.0 հեկտար: 2014 թվականի համեմատ ընդհանուր ցանքատարածքների մակերեսները նվազել են 15456.0 հեկտարով կամ 22.8 տոկոսով, այդ թվում աշնանացան մշակաբույսեր՝ 10274.0 հեկտար կամ 20.2 տոկոս, գարնանացան մշակաբույսեր՝ 5182.0 հեկտար կամ 31.0 տոկոս:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

/հեկտար/

	2014թ.	Տոկոսներով ընդամենի նկատմամբ	2015թ.	Տոկոսներով ընդամենի նկատմամբ
Ընդամենը	***67666.1***	***100.0***	***52210.2***	***100.0***
Աշնանացան մշակաբույսեր	50928.4	75.3	40654.2	77.9
Գարնանացան մշակաբույսեր	16737.7	24.7	11556.0	22.1

Ըստ օպերատիվ տվյալների, 2015 թվականին ցանքատարածքների գերակշռող մասը՝ 48304.4 հեկտարը (92.5 տոկոս), կազմել են հացահատիկային մշակաբույսերի տարածքները: Նախորդ տարվա համեմատ, հացահատիկայինների ցանքատարածքներն նվազել են 12580.3 հեկտարով կամ 20.7 տոկոսով:

ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

/հեկտար/

	2014թ.	2015թ.	Աճի տեմպը, %
Հացահատիկային մշակաբույսեր	**60884.7**	**48304.4**	**79.3**
ցորեն	30469.0	24019.0	78.8
գարի	23396.2	18227.0	77.9
հաճար	2333.0	2829.9	121.3
եգիպտացորեն	4686.5	3228.5	68.9

Ինչպես նախորդ տարիներին, 2015 թվականին ևս հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքն անկորուստ կազմակերպելու նպատակով ստեղծվել է հանրապետական օպերատիվ շտաբ: Վերջինիս կողմից իրականացված կազմակերպված ու արդյունավետ աշխատանքի արդյունքում բերքահավաքի ընթացքում հաջողվել է զերծ մնալ մասայական հրդեհներից: Ընդհանուր առմամբ այդ ժամանակահատվածում այրվել է 649.5 հեկտար ցանքատարածք, այդ թվում՝

Հ/հ	Շրջանի անվանումը	Ընդամենը հրդեհված տարածքներ	որից	
			Ցորեն	Գարի
1	Ասկերան	10,2	10,2	
2	Հադրութ	125,5	23,5	102,0
3	Մարտակերտ	197,4	148,6	48,8
4	Մարտունի	133,7	110,6	23,1
5	Քաշաթաղ	182,7	94,0	88,7
Ընդամենը		649.5	386,9	262,6

Հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի աշխատանքներում ընդգրկվել է 190 միավոր կոմբայն, այդ թվում 49 միավոր՝ ներգրավված ՀՀ-ից:

Հանրապետությունում ցանված հացահատիկային մշակաբույսերի 48304.4 հեկտար տարածքներից (ներառյալ եգիպտացորեն), ըստ օպերատիվ տվյալների, փաստացի հնձվել է 45605.5 հեկտար կամ ցանված տարածքների 94.4 տոկոսը, կալսվել է 120157.2 տոննա հացահատիկ, միջին բերքատվությունը կազմել է 26.3 ց/հա: Նախորդ տարվա համեմատ հացահատիկային մշակաբույսերի համախառն բերքը աճել է 52795.3 տոննայով կամ 78.0 տոկոսով, մեկ հեկտարի միջին բերքատվությունը 13.6 ցետներով կամ 2.1 անգամ:

ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ, ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԸ ԵՎ
ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ

Շրջանի անվանումը	Ցանված տարածքը (հա)			Հավաքվել է փաստացի (հա)			Կալսվել է (տ)			Բերքատվությունը (ց/հա)	
	2014թ.	2015թ.	2015թ-ը 2014թ-ի նկատմամբ, %-ով	2014թ.	2015թ.	2015թ-ը 2014թ-ի նկատմամբ, %-ով	2014թ.	2015թ.	2015թ-ը 2014թ-ի նկատմամբ, %-ով	2014թ.	2015թ.
Ասկերան	11952,7	10529,1	88,1	10478,7	9923,3	94,7	18183,3	25478,6	140,1	17,4	25,7
Հադրութ	10780,5	9029,5	83,8	8502,5	8634,0	101,5	10016,4	20789,1	207,6	11,8	24,1
Մարտակերտ	5287,3	4167,6	78,8	4012,5	3703,8	92,3	4965,9	8317,8	167,5	12,4	22,5
Մարտունի	14895,5	10394,4	69,8	12448,9	9745,9	78,3	12174,1	27417,2	225,2	9,8	28,1
Շահումյան	137,9	26,0	18,9	131,7	26,0	19,7	161,1	56,3	34,9	12,2	21,7
Շուշի	166,0	202,7	122,1	166,0	194,0	116,9	198,9	345,8	173,9	12,0	17,8
Քաշաթաղ	17664,8	13955,1	79,0	17256,2	13378,5	77,5	21662,2	37752,4	174,3	12,6	28,2
Ընդամենը	***60884,7***	***48304,4***	***79,3***	***52996,5***	***45605,5***	***86,1***	***67361,9***	***120157,2***	***178,4***	***12,7***	***26,3***

Ընդհանուր առմամբ, հնձվել է 23468.4 հեկտար ցորեն, 17898.3 հեկտար գարի, 2708.4 հեկտար հաճար և 1530.4 հեկտար եգիպտացորեն: Կալսվել է 65068.1 տոննա ցորեն, 46114.9 տոննա գարի, 5061.9 տոննա հաճար և 3912.3 տոննա եգիպտացորեն,

միջին բերքատվությունը կազմել է, համապատասխանաբար, 27.7, 25.8, 18.7 և 25.6 g/ha: Բացի այդ, եգիպտացորենի տակ ցանված տարածքներից 477.0 հեկտար հնձվել է սիլոսի համար, հավաքվել է 5118.7 տոննա բերք, միջին բերքատվությունը կազմել է 107.3 g/ha:

ՑՈՐԵՆԻ, ԳԱՐՈՒ, ՀԱՃԱՐԻ ՈՒ ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ, ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԸ ԵՎ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ

Շրջանի անվանումը	Ցորեն			Գարի			Հաճար			Եգիպտացորեն		
	Հավաքվել է փաստացի (հա)	Կալսվել է (տ)	Բերքատվությունը (g/հա)	Հավաքվել է փաստացի (հա)	Կալսվել է (տ)	Բերքատվությունը (g/հա)	Հավաքվել է փաստացի (հա)	Կալսվել է (տ)	Բերքատվությունը (g/հա)	Հավաքվել է փաստացի (հա)	Կալսվել է (տ)	Բերքատվությունը (g/հա)
Ասկերան	6663,2	18134,0	27,2	1857,9	4206,0	22,6	639,1	607,6	9,5	763,1	2531,0	33,2
Հադրութ	3427,0	8225,7	24,0	5100,0	12245,4	24,0	2,0	3,0	15,0	105,0	315,0	30,0
Մարտակերտ	2199,9	5791,7	26,3	693,9	1404,1	20,2	210,0	192,0	9,1	600,0	930,0	15,5
Մարտունի	6557,3	19590,3	29,9	3109,5	7718,8	24,8	54,8	63,3	11,6	24,3	44,8	18,4
Շահումյան	12,0	25,2	21,0	1,0	1,1	11,0				13,0	30,0	23,1
Շուշի	156,0	309,8	19,9				38,0	36,0	9,5			
Քաշաթաղ	4453,0	12991,4	29,2	7136,0	20539,5	28,8	1764,5	4160,0	23,6	25,0	61,5	24,6
Ընդամենը	***23468,4***	***65068,1***	***27,7***	***17898,3***	***46114,9***	***25,8***	***2708,4***	***5061,9***	***18,7***	***1530,4***	***3912.3***	***25,6***

Ըստ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարության տվյալների 2015 թվականի հունիս-դեկտեմբեր ամիսներին (բերքահավաքի մեկնարկից սկսած ժամանակահատվածում) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքից արտահանվել է 19411.2 տոննա հացահատիկ: Արդյունքում տարեվերջին հանրապետությունում հացահատիկի մնացորդը կազմել է 100642.8 տոննա՝ նախորդ տարվա 46742.4 դիմաց:

ՀԱՑԱՀԱՏԻԿԻ ԲԵՐՔԻ ՇԱՐԺԸ

Մշակաբույսը	**Արտադրվել է**		**2015թ. 2014թ. Նկատմամբ, %**	**Արտահանվել է**		**2015թ. 2014թ. Նկատմամբ, %**	**Այդ թվում՝ բերքահավաքի մեկնարկից**		**2015թ. 2014թ. Նկատմամբ, %**	**Մնացորդը**		**2015թ. 2014թ. Նկատմամբ, %**
	առ30.10.2014թ	**առ 0.10.2015թ.**		**2014թ. (հունվար դեկտեմբեր)**	**2015թ. (հունվար դեկտեմբեր)**		**2014թ. (հունիս-դեկտեմբեր)**	**2015թ. (հունիս-դեկտեմբեր)**		**2014թ. (11=2-8)**	**2015թ. (12=3-9)**	
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**	**11**	**12**	**13**
Ցորեն(հաճար)	33188.2	70130.0	211.3	3405.8	5947.0	174.6	2947.6	5913.2	200.6	30240.6	64216.8	212.4
Գարի	17461.5	46024.9	263.6	4164.4	12578.5	302.1	3528.6	12238.1	346.8	13932.9	33786.8	242.5
Եգիպտացորեն	4929.7	3899.1	79.1	4051.9	1755.9	43.3	2630.9	1259.9	47.9	2298.8	2639.2	114.8
ԸՆԴԱՄԵՆԸ	***55579.4***	***120054.0***	***216.0***	***11622.1***	***20281.5***	***174.5***	***9107.0***	***19411.2***	***213.1***	***46472.4***	***100642.8***	***216.6***

2015 թվականի բերքի տակ ցանված 397.4 հեկտար արևածաղկի ցանքատարածքներից հնձվել է 363.1 հա, հավաքվել է 365.0 տոննա հատիկի և 39.5 տոննա՝ սիլոսի համար, միջին բերքատվությունը կազմել է, համապատասխանաբար, 11.1 և 11.6 g/հա:

ԱՐԵՎԱԾԱՂԿԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ, ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԸ ԵՎ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ
ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ

Շրջանի անվանումը	Ցանված տարածքը (հա)	Հնձվել է (հա)		Հավաքվել է (տոննա)		Բերքատվությունը (g/հա)	
		հատիկի համար	սիլոսի համար	հատիկի համար	սիլոսի համար	հատիկի համար	սիլոսի համար
Ասկերան	243.1	177.0	34.1	214.7	39.5	12.1	11.6
Մարտակերտ	85.0	85.0		85.0		10.0	
Մարտունի	69.0	67.0		65.3		9.7	
Քաշաթաղ	0.3						
Ընդամենը	***397.4***	***329.0***	***34.1***	***365.0***	***39.5***	***11.1***	***11.6***

Հաշվետու տարում հանրապետությունում առկա բերքահավաքի ենթակա 1468.2 հա խաղողայգիներից հավաքվել է 1287.6 հա տարածք, համախառն բերքը կազմել է 12921.5 տոննա, միջին բերքատվությունը՝ 100.4 g/հա: Նախորդ տարվա համեմատ բերքահավաք իրականացրած տարածքները նվազել են 727.6 հեկտարով կամ 36.1 տոկոսով, սակայն 7540.3 տոննայով կամ 2.4 անգամ աճել է համախառն բերքը, մեկ հեկտարի միջին բերքատվությունն էլ ավելացել է 73.7 ցենտներով կամ 3.8 անգամ:

ԽԱՂՈՂԻ ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ՄԱԿԵՐԵՍՆԵՐԸ (ՊՏՂԱՏՈՒ ՀԱՍԱԿՈՒՄ), ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԸ ԵՎ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ

Շրջանի անվանումը	Հավաքվել է (հա)		Համախառն բերքը (տոննա)		Բերքատվությունը (g/հա)	
	2014թ.	2015թ.	2014թ.	2015թ.	2014թ.	2015թ.
Ասկերան	172.3	148.1	818.9	929.5	47.5	62.8
Հադրութ	272.0	145.0	530.4	397.5	19.5	27.4
Մարտակերտ	68.9	28.0	431.0	254.0	62.6	90.7
Մարտունի	1405.0	887.5	3072.3	10968.5	21.9	123.6
Շահումյան	4.0	4.0	19.0	12.0	47.5	30.0
Քաշաթաղ	93.0	75.0	509.6	360.0	54.8	48.0
Ընդամենը	***2015.2***	***1287.6***	***5381.2***	***12921.5***	***26.7***	***100.4***

Վերջին տարիներին լուրջ ներդրումներ են իրականացվում ծխախոտի մշակության զարգացման բնագավառում:

2015 թվականին «Մասիս տաբակո» ընկերությունը շարունակել է աջակցել Ասկերանի, Մարտակերտի, Մարտունու շրջանների հողօգտագործողներին, ագրոտեխնիկական պահանջներին համապատասխան, ծխախոտի մշակության աշխատանքները կազմակերպելու հարցում:

Հաշվետու տարում հանրապետությունում 146.5 հեկտարի վրա կատարվել է ծխախոտի մշակություն, ինչը նախորդ տարվա համեմատ ավել է 60.5 հեկտարով կամ 70.3 տոկոսով, համախառն բերքն կազմել է 1345 տոննա, որը նախորդ տարվա համեմատ ավել է 517.0 տոննայով կամ 62.4 տոկոսով, մեկ հեկտարի միջին բերքատվությունը աճել է 13.9 ցետներով կամ 14.4 տոկոսով:

ԾԽԱԽՈՏԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ, ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԸ ԵՎ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ

	Ասկերան		Մարտակերտ		Մարտունի		***Ընդամենը***	
	2014թ.	2015թ.	2014թ.	2015թ.	2014թ.	2015թ.	***2014թ.***	***2015թ.***
Ցանվել է (հա)	18.2	38.0	12.0	7.5	55.8	101.0	***86.0***	***146.5***
Հավաքվել է (հա)	18.2	34.0	12.0	5.0	55.8	83.1	***86.0***	***122.1***
Համախառն բերքը (տ)	139.0	293.0	29.0	0.5	660.0	1051.5	***828.0***	***1345.0***
Բերքատվությունը (գ/հա)	76.4	86.2	24.2	1.0	118.3	126.5	***96.3***	***110.2***

Հաշվետու տարվա սեպտեմբերից հանրապետությունում սկսվել են 2016 թվականի բերքի տակ աշնանացանի հետ կապված աշխատանքները:

Ըստ նախարարության օպերատիվ տվյալների, հանրապետությունում 2016 թվականի բերքի տակ կատարվել է 57964.1 հեկտար հերկ ինչը նախորդ տարվա համեմատ ավել է 14742.8 հեկտարով կամ 34.1տոկոսով , ցանվել 54595.6 հեկտար աշնանացան հացահատիկ ինչը նախորդ տարվա համեմատ ավել է 15145 հեկտարով կամ 38.4 տոկոսով

Հ/հ	Շրջանները	Կատարվել է հերկ			Ցանված է հացահատիկ		
		առ 14.01.2015թ.	առ 13.01.2016թ.	2015թ. 2014թ. նկատմամբ,%	առ 14.01.2015թ.	առ 13.01.2016թ.	2015թ. 2014թ. նկատմամբ,%
1	Ասկերան	9323,3	11795,4	126,5	8344,1	10838,0	129,9
2	Հադրութ	8450,0	10065,0	119,1	8000,0	9543,1	119,3

3	Մարտակերտ	3343,0	5477,2	163,8	3016,2	5108,2	169,4
4	Մարտունի	11228,0	13795,0	122,9	9521,3	12957,3	136,1
5	Շահումյան	22,0	127,5	5,8անգ.	13,0	122,0	9,4 անգ.
6	Շուշի	180,0	184,0	102,2	156,0	167,0	107,1
7	Քաշաթաղ	10675,0	16520,0	154,8	10400,0	15860,0	152,5
ԸՆԴԱՄԵՆԸ		***43221,3***	***57964,1***	***134,1***	***39450,6***	***54595,6***	***138,4***

Կարևորելով գյուղատնտեսության ճյուղերի համաչափ զարգացումը, հետևողական քայլեր են ձեռնարկվում նաև անասնաբուծության ճյուղի արդյունավետության բարձրացման համար:

Հաշվետու տարում անասնաբուծության ճյուղում արձանագրվել է համախառն արտադրանքի աճ :

Այսպես 2015 թվականին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են մսի. կաթի և ձվի արտադրության ծավալները, համապատասխանաբար, 2.9, 4.4 և 0.6 տոկոսով (2015 թվականին արտադրվել է 11895.9 տոննա միս, 49500.7 տոնա կաթ և 40712.0 հազար հատ ձու) :

ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

	2014թ. հունվար-նոյեմբեր	2015թ. հունվար-նոյեմբեր	Աճի տեմպը (տոկոս)
Միս (կենդանի քաշով), *տոննա*	11557.4	11895.9	102.9
Կաթ, *տոննա*	47424.0	49500.7	104.4
Ձու, *հազ. հատ*	40462.0	40712.0	100.6

2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ ԼՂՀ-ում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կազմել է 53280 գլ, այդ թվում կովեր՝ 21960գլ, խոզեր՝ 23289 գլ, մանր եղջերավոր անասուններ՝ 98971գլ, թռչուններ՝ 378421թև: Աճի տեմպը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է համապատասխանաբար՝ 91.4 , 93.5 , 181.2 , 87.5 և 110.5 տոկոսով:

Անասնագլխաքանակի աճի տեմպը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ

Անասնատեսակ	խ.ե.ա	կով	խոզեր	մ.ե.ա	թռչուն
01.01.2015	58311	23532	12855	113089	342614
01.01.2016	53280	21960	23289	98971	378421
աճի տեմպը %	91.4	93.5	181.2	87.5	110.5
աճի տեմպը +-	-5031	-1572	10434	-14118	35807

Ընդհանուր առմամբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը նվազել է 5031-ով, այդ թվում՝ կովերի գլխաքանակը նվազել է 1572-ով, խոզերի գլխաքանակը աճել է 10434-ով, մանր եղջերավոր անասունների գլխաքանակը նվազել է 14118-ով, թռչունների գլխաքանակը աճել է 35807 թևով:

Նշված տարում նաև բարձրացել է կովերի կաթնային մթերատվությունը՝ աճի տեմպը կազմել է 110,7 տոկոս, որը պայմանավորված է տեղական նախրի մթերատվության բարձրացման ուղղությամբ իրականացվող ծրագրերի՝ տոհմային ցուլերի տրամադրմամբ և արհեստական սերմնավորման իրականացմամբ: Իսկ միջին ձվատվությունն ու բրդատվությունը գրեթե պահպանել են նախորդ տարվա ցուցանիշները:

Գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունը 2014-2015 թթ.

	2014 թ.	2015 թ.	Աճի տեմպը %
1 կովի միջին կաթնատվությունը, կգ	1940	2148	110,7
1 ածան հավի միջին ձվատվությունը, հատ	193	190	98,4
1 ոչխարի միջին բրդատվությունը, կգ	2,8	2,8	100

2015 թվականին շարունակվել են գյուղատնտեսական կենդանիների տոհմային ու մթերատու հատկանիշների բարելավման, անասնաբուծության ճյուղի վարկավորման և սուբսիդավորման ծրագրերը, ինչպես նաև սեմինարների հրավիրման և ֆերմերներին մասնագիտական խորհրդատվության տրամադրման աշխատանքները:

Տեղական անասնագլխաքանակի տոհմային և մթերատու հատկանիշների բարելավման նպատակով, 2015 թվականից շարունակում է գործել տոհմային ցուլերի տրամադրման ծրագիրը, որի շրջանակում տոհմային տնտեսություններից հանրապետության ֆերմերներին արտոնյալ պայմաններով տրամադրվել է 98 գլուխ տոհմային անասուն:

Հաշվետու ժամանակաշրջանում իրագործվել է նաև կենդանիների արհեստական սերմնավորման ծրագիրը, որի նպատակն է տեղական նախրի բարելավումը: Ծրագրի շրջանակում իրականացվել է 215 գլխի արհեստական սերմնավորում:

2015 թվականին ենթաշրջանային զարգացման ծրագրերի շրջանակում ձեռք են բերվել՝ Խրամորթի ենթաշրջանում 20 գլուխ Խ.Ե.Ա., Տողի ենթաշրջանում 61 գլուխ Խ.Ե.Ա. և Ուխտաձորի ենթաշրջանում 5 գլուխ Խ.Ե.Ա. և 60 գլուխ Մ.Ե.Ա.:

Հաշվետու տարվա կարևոր ձեռքբերումներից մեկն էլ այն է, որ իրականացված անասնաբուժասանիտարական միջոցառումների շնորհիվ հաջողվել է հանրապետությունում պահպանել անասնահամաճարակային կայուն իրավիճակ, բացառությամբ՝ բրուցելյոզ, Խ.Ե.Ա. ծաղիկ, խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդությունների առանձին դեպքերի: Հիվանդության տարածման, կանխման և հիվանդ անասունների բուժման նպատակով օպերատիվ իրականացվել են

համապատասխան բուժկանխարգելման միջոցառումներ, որի արդյունքում կայունացել է համաճարակաբանական իրավիճակը:

2015 թվականին ընդհանուր հաշվով անասնաբույժների կողմից իրականացվող հակահամաճարակային միջոցառումների ընթացքում կատարվել է շուրջ 1.6 մլն կանխարգելիչ սրսկում և խոշոր ու մանր եղջերավոր անասունների բրուցելոզ հիվանդության նկատմամբ շուրջ 127000 գլխի արյան նմուշի շիճուկաբանական հետազոտություն:

Խոշոր եղջերավոր անասունների բրուցելոզ հիվանդության նկատմամբ կատարվել է 47361 սերոլոգիական քննություն, որից՝ 208 դրական, 2014 թ. կատարվել է 48301 սերոլոգիական քննություն, որից՝ 262 դրական: Ընդհանուր առմամբ նախորդ տարվա համեմատ կատարված արյան քննությունը նվազել է 940-ով, իսկ դրական հակազդածները ստուգված գլխաքանակի համեմատ կազմում են համապատասխանաբար՝ 0.44 և 0.54 տոկոս , այսինքն՝ նվազել է հիվանդ անասունների գլխաքանակը:

Մանր եղջերավոր անասունների բրուցելոզ հիվանդության նկատմամբ կատարվել է 79708 սերոլոգիական քննություն, որից՝ 418 դրական, 2014 թ. կատարվել է 73792 սերոլոգիական քննություն, որից՝ 338 դրական: Ընդհանուր առմամբ նախորդ տարվա համեմատ կատարված արյան քննությունը ավելացել է 5916-ով, իսկ դրական հակազդածները ստուգված գլխաքանակի համեմատ կազմում են համապատասխանաբար՝ 0.52 և 0.46 տոկոս, այսինքն՝ ավելացել է հիվանդ անասունների գլխաքանակը, որը պայմանավորված է դրանց իրացման դժվարություններով:

2015 թվականին կաթ վերամշակող ընկերությունների կողմից մթերվել է 3055.4 տոննա կաթ, ինչը գերազանցում է նախորդ տարվա ծավալը 6.4 տոկոսով:

Հաշվետու տարում շարունակվել են գյուղատնտեսական տեխնիկայի բնագավառում պետական տեսչական աշխատանքները, մասնավորապես՝ տրամադրվել են գյուղմեքենաների պետհամարանիշներ, տեխնիկական անձնագրեր, գյուղսարքավորումների գրանցման վկայագրեր, գյուղմեքենաների վարման իրավունքի վկայականներ, կատարվել են գյուղմեքենաների և սարքավորումների գրանցման, վերագրանցման ու հաշվառումից հանման, կորցրած պետհամարանիշների վերական•ման աշխատանքներ: Հատկացվել է տրակտորիստ-մեքենավարի վարման իրավունքի 50 վկայական:

Վերոնշյալ բոլոր աշխատանքների իրագործման արդյունքում պետական բյուջե է մուտքագրվել 1650,8 հազար դրամ որպես պետական տուրք:

Գյուղատնտեսական տեխնիկային հավաքակազմի թարմացման ու վերազինման նպատակով 2015 թվականին լիզինգային եղանակով հանրապետության տարբեր շրջանների տնտեսվարող սուբյեկտներին տրամադրվել է 680823.0 հազ. դրամ

ընդհանուր արժողությամբ գյուղտեխնիկա և սարքավորումներ՝ թվով 29 միավոր գերմանական տեխնիկա, այդ թվում 20 անիվավոր տրակտոր և 9 հացահատիկահավք կոմբայն, 11 միավոր ունիվերսալ կցասալ, 2 միավոր սկավառակային փոցխ, 3 միավոր խոտհնձիչ և այլն:

ԼՂՀ Հադրութի շրջանի Ուխտաձորի և Տողի ենթաշրջանների գյուղատնտեսության զարգացման ծրագրով տրամադրվել է 14.5 մլն գումարի փոխառություն, որով ձեռք է բերվել 8 միավոր գյուղտեխնիկա:

2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում առկա գյուղտեխնիկայի քանակը կազմել է 2046 միավոր, այդ թվում 326 միավոր հացահատիկահավաք կոմբայն, 935 միավոր անիվավոր տրակտոր և 736 միավոր թրթուրավոր տրակտոր, 25 միավոր կցասայլ, 5 միավոր սիլոսահավաք կոմբայն, 18 միավոր խոտհնձիչ: Բացի այդ առկա է նաև 1629 միավոր գյուղատնտեսական սարքավորում:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԱՌ.01.01.2016Թ.

Շրջանի անվանումը	Հացահատի-կահավաք կոմբայն	Անիվավոր տրակտոր	Թրթուրավոր տրակտոր	Կցասայլ	Սիլոսահավաք կոմբայն	Խոտհնձիչ	Ընդամենը շրջանում /միավոր/
Ասկերան	62	162	157	4	1	2	388
Հադրութ	58	108	117	3			286
Մարտակերտ	38	134	95	3			270
Մարտունի	88	216	276		1	12	593
Շուշի	2	15	8				25
Քաշաթաղ	1	24	6	1			32
Շահումյան		9	4				13
Ստեփանակերտ	77	267	74	14	3	4	439
Ընդամենը	326	935	737	25	5	18	2046

Հաշվետու տարում ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի գործունեությունն ուղղված է եղել ԼՂՀ օրենսդրական դաշտով վերապահված լիազորությունների և սահմանված դրույթների իրականացմանը:

Նշված ժամանակահատվածում տեսչությունների կողմից իրականացվել են ուսումնասիրություններ և դիտարկումներ ընդհանուր 627 տնտեսվարող սուբյեկտներում, որից՝ սննդամթերքի անվտանգության, որակի և օպերատիվ հսկողության տեսչություն 452, բուսասանիտարիայի տեսչություն 90, անասնաբուժության տեսչության 85 տնտեսվարող սուբյեկտներում: Իրականացրած դիտարկումների և ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել և խոտանվել են՝ մսամթերք- 600կգ,

կաթնամթերք- 350կգ, քաղցրավենիք և հրուշակեղեն -315կգ, հյութ - 1000լ, թեյ- 13կգ, ձու- 14284 հատ-ոչնչացվել է (տնտեսվարողի դիմումի համաձայն), բուսական յուղ - 84լ, պահածո- 40կգ, չիպս-64 հատ, ալկոհոլային խմիչքներ-14լ այլ սննդամթերք -170կգ:

Հաշվետու տարում իրականացվել են ստուգումներ 90 տնտեսվարող սուբյեկտներում: 63 տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ և նշանակվել տուգանք ընդհանուր 6385.0 հազ դրամի չափով:

2015 թվականին հանրապետությունում հերթական անգամ նշվել է գյուղատնտեսության աշխատողի մասնագիտական տոնը, ինչի կապակցությամբ ոլորտի մի շարք ներկայացուցիչներ ԼՂՀ Վարչապետի և գյուղատնտեսության նախարարի կողմից արժանացել են պարգևների:

ԼՂՀ գյուղատնտեսության նախարարությունն իր պաշտոնական կայքէջի և հանրապետության առաջատար զանգվածային լրատվամիջոցների հետ սերտ համագործակցության միջոցով ապահովել է ոլորտում իրականացվող տարբեր աշխատանքների, նախարարության ու նրա կառավարման ոլորտում գործող պետական մարմինների գործունեության լուսաբանումը: Մշակվել և ընդունվել է ԼՂՀ գյուղատնտեսության նախարարությունում լրագրողների հավատարմագրման կարգը, որը նպատակ ունի ապահովել նախարարության գործունեության թափանցիկությունը և այդ գործունեության մասին անմիջական տեղեկատվություն ստանալու համար լրագրողների համար բարենպաստ պայմանների ապահովումը:

Գյուղատնտեսության ոլորտում փորձի փոխանակման նպատակով հաշվետու տարում այցելություններ են կազմակերպվել Էստոնիայի, Իսրայելի հանրապետությաուններ, ինչպես նաև Չինաստանի ժողովրդական հանրապետություն:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել է ագրարային ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը հետևողական կատարելագործելու ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Նախարարությանը վերապահված լիզորությունների արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով 2015 թվականին մշակվել և ընդունվել են մոտ յոթ տասնյակ իրավական ակտեր, այդ թվում՝ երկու օրինագիծ՝ «Անասնաբուժության մասին» և «Օրգանական գյուղատնտեսության մասին» ԼՂՀ օրենքները, ԼՂՀ կառավարության որոշման հիսունյոթ նախագիծ, ութ գերատեսչական նորմատիվ ակտ: Մշակվել են «Օրգանական գյուղատնտեսության մասին» ԼՂՀ օրենքից բխող մի շարք իրավական ակտեր:

Հավանության են արժանացել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գյուղատնտեսական մթերքներ վերամշակող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին ավելացված արժեքի հարկի գումարի փոխհատուցման, մեխանիկական եղանակով մատակարարվող ոռոգման ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի մասնակի սուբսիդավորման, Լեռնային Ղարաբաղի

Հանրապետությունում խոզաբուծության զարգացման նպատակով ձեռքբերվելիք խոզամերուններ և կերի արժեքի փոխառությամբ տրամադրման ծրագրերը:

Գործողության մեջ է դրվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կերարտադրության և անասնաբուծության զարգացման 2015-2017 թվականների ծրագիրը:

Գյուղատնտեսությունը շարունակելու է իր ռազմավարական գործունեությունն իրականացնել նաև 2016 թվականին: Այդ նպատակով ոլորտին հատկացվել է 4145066 .8 հազ. դրամ, որը կուղղվի նախորդ տարիներին սկսված մի շարք ծրագրերի և միջոցառումների իրագործմանը, ինչպես նաև նոր՝ գարնանացան մշակաբույսերի ցանքաշրջանառության ծրագրերի խթանման, ջրախնայողական տեխնոլոգիաների ներդրման խթանման, խմելու և ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորման, ջրամբարների, ջրանցքների, ջրատարների վերանորոգման, վերականգնման և պահպանման ծրագրերի իրականացմանը: